ՀՀ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԵԼԱԿԵՏ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱ-ԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Արթուր Ծպնեցյան

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, համախառն ներքին արդյունք, զբաղվածություն, արտաքին ապրանքաշրջանառություն, գյուղացիական տնտեսութուն, գյուղատնտեսական առևտրային կազմակերպություն, գյուղատնտեսական համատարած հաշվառում, տնտեսությունների ներուժ:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առաջատար ոլորտներից մեկն է, վերջինիս մասին վկայում են հետևյալ ցուցանիշները: Գյուղատնտեսության ոլորտում, 2015 թվականի տվյալներով ստեղծվել է երկրի համախառն ներքին արդյունքի 17.3 %-ը [1], ոլորտում զբաղված է հանրապետության ամբողջ զբաղվածների 35.3 %-ը[2], հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության կառուցվածքում 22.2 %-ը բաժին է ընկնում գյուղատնտեսական ծագման արտադրանքին, իսկ միայն արտահանման՝ 26.2 %[3]: Տեղական արտադրության հաշվին ապահովվում է, էներգետիկ արժեքով գնահատված, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ավելի քան 60 %-ը:

Հանրապետությունում գյուղատնտեսությունը, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, վարվում է 339.2 հազ. գյուղացիական տնտեսությունների և շուրջ 100 գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների միջոցով, մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.33 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.1 հա վարելահող[4]:

Գյուղատնտեսական մթերքների բացարձակ գերակշռող մասը՝ 97.2 %-ը, արտադրվում է գյուղացիական տնտեսությունների (ընտանեկան տնտեսությունների) կողմից[5]:

Գյուղացիական տնտեսությունների միջին չափը, ըստ էության, չի բնորոշում դրանց իրական ներուժը, դրանց չափերի կառուցվածքը: Վերջին խնդրի լուծմանն էականորեն նպաստում է Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալները:

Համաձայն գործող մեթոդաբանության և «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի՝ գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների հավաքագրման, մշակման և տարածման վիճակագրական գործառույթ:

Հայաստանի Համրապետությունում գյուղատնտեսության համատարած հաշվառումն անցկացվել է 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ: Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառումը անցկացվել է առաջին անգամ և, համաձայն գործող օրենսդրության, այն պետք է իրականացվի տասը տարին մեկ:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նպատակներն են[6]՝

---

* Հոդվածն ընդունվել է 13.02.2017:
Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտ.ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Է.Ս.Ղազարյանը:

- *Գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը՝ հանրապետական, մարզային և համայնքային կտրվածքով,*
- *Գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների հաշվառման ամբողջական համակարգի ձևավորումը,*
- *Գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորումը, միջազգային վիճակագրական տվյալների հետ համադրելիության ապահովումը:*

Գյուղատնտեսական համատարած հաշվառմամբ հավաքագրված տվյալները հնարավորություն կստեղծեն բարելավելու գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակագրությունը, ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, ձևավորել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, բացահայտել գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները, հստակեցնել գյուղատնտեսության, որպես ծեռնարկատիրության առավել մանրամասն կազմն ու կառուցվածքը:

Գյուղատնտեսության համատարած հաշվառման տվյալները հնարավորություն են տալիս առավել ճշգրիտ գնահատելու գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց ներուժը:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքներով գյուղացիական մեկ տնտեսության չափերը, ըստ հանրապետության մարզերի, էականորեն տարբերվում են նախորդ հաշվառման տվյալներից: Այսպես օրինակ, եթե նախորդ հաշվառման արդյունքներով մեկ գյուղացիական տնտեսության միջին հաշվով բաժին են ընկել 1.33 հա գյուղատնտեսական հողատեսքեր, իսկ գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով այն կազմել է 1.48 հա:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից նախորդ հաշվառման և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքներով գյուղացիական տնտեսությունների (ֆիզիկական անձանց տնտեսությունների) չափերը ըստ մարզերի ներկայացվում է գծապատկերի տեսքով:

Գծապատկերից երևում է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախորդ հաշվառման տվյալներով ՀՀ մարզերի գերակշռող մասում տնտեսություններն ունեն առավել փոքր չափեր քան ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով: Նախորդ հաշվառման տվյալներով մեկ տնտեսության հաշվով առավել մեծ չափ գրանցվել է ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում:



Գծապատկեր: Գյուղացիական տնտեսությունների (ֆիզիկական անձանց տնտեսությունների) չափերը ըստ մարզերի

Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսությունների, դրանցից գյուղատնտեսական հողեր ունեցող տնտեսությունների, պատկանող գյուղատնտեսական հողերի և մեկ տնտեսության հաշվով գյուղատնտեսական հողերի չափը, ըստ մարզերի, ներկայացված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են, որ վերջիններս էականորեն տարբերվում են նախորդ հաշվառման տվյալներից: Ըստ մարզերի՝ տնտեսությունների չափերը էականորեն տարբերվում են, մասնավորապես՝ միջինից բարձ չափեր ունեն Արագածոտնի (1.99 հա), Գեղարքունիքի (1.69 հա), Լոռու (1.68 հա), Շիրակի (2.54 հա), Սյունիքի (2.01 հա) և Վայոց ձորի (1.76 հա) մարզերը: ՀՀ մարզերից առավել փոքր տնտեսությունների միջին չափ գրանցվել է ՀՀ Արարատի մարզում:

Աղյուսակ 1

ՀՀ ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսությունների թիվը, դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը և մեկ տնտեսության պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի չափը ըստ մարզերի[7]

	Տնտեսություններ, ընդամենը, միավոր	որից՝ գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող տնտեսություններ, ընդամենը, միավոր	Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը, հա	Գյուղատնտեսական նշանակության հողերի միջին չափը մեկ տնտեսության հաշվով
ՀՀ, ընդամենը այդ թվում՝	360611	345875	513000.21	1.48
Արագածոտն	31795	30919	61478.55	1.99
Արարատ	49116	48024	34496.00	0.72
Արմավիր	41960	39491	56946.82	1.44
Գեղարքունիք	53639	53356	90233.30	1.69
Լոռի	37646	35712	59830.64	1.68

Կոտայք	37764	36211	43843.14	1.21
Շիրակ	31695	30926	78423.74	2.54
Սյունիք	21361	20251	40747.35	2.01
Վայոց ձոր	10384	9969	17531.41	1.76
Տավուշ	35978	33755	29147.27	0.86
ք. Երևան	9273	7262	321.98	0.04

Գյուղացիական տնտեսությունների ներուժի գնահատման համար կարևոր է դիտարկել տնտեսությունների չափերը ըստ կառուցվածքի: Հաշվի առնելով նշվածը կարևոր ենք համարել դիտարկել տնտեսությունների չափերը և դրանց պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերը:

Ստորև ներկայացվում է տնտեսությունների թիվը, ըստ գյուղատնտեսական հողերի չափի, ինչպես նաև դրանց պատկանող գյուղատնտեսական հողերի ընդհանուր չափը և դրանց տեսակարար կշիռները բնութագրող տվյալները (2-րդ աղյուսակ):

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են հանրապետությունում առկա 345875 տնտեսությունների բաշխումն ըստ չափերի: Տնտեսությունների մեծ մասը՝ 22.68 %-ը, բաժին է ընկնում մինչև 0.1 հա ունեցող տնտեսություններին, այնուհետև մեծ տեսակարարար կշիռ ունի 1-1.99 հա չափեր ունեցող տնտեսությունները:

Աղյուսակ 2

ՀՀ տնտեսությունների թիվը ըստ գյուղատնտեսական հողերի չափի, դրանց պատկանող գյուղատնտեսական հողերի ընդհանուր չափը և տեսակարար կշիռները բնութագրող տվյալները[8]

Հողերի չափերը, հա	Միավոր	Տեսակարար կշիռը, %	Հեկտար	Տեսակարար կշիռը, %
մինչև 0.1	78447	22.68	3674.82	0.72
0.1-0.19	24461	7.07	3932.04	0.77
0.2-0.49	41391	11.97	16527.30	3.22
0.5-0.99	61971	17.92	51053.72	9.95
1-1.99	69878	20.20	106766.58	20.81
2-2.99	31217	9.03	79859.99	15.57
3-4.99	22295	6.45	89451.23	17.44
5-9.99	12359	3.57	84546.33	16.48
10-19.99	2857	0.83	37728.29	7.35
20-49.99	829	0.24	22202.43	4.33
50-99	119	0.03	8551.33	1.67
100-199	37	0.011	4214.31	0.82
200 և ավել	13	0.004	4491.84	0.88
Ընդամենը	345875	100.00	513000.21	100.00

Նշվածի հետ մեկտեղ այլ պատկեր գոյություն ունի տվյալ տնտեսություններին պատկանող հողատարածքների առումով: Այսպես՝ մինչև 0.1 հա չափեր ունեցող տնտեսությունների թվի 22.63 %-ի պայմաններում դրանց պատկանող գյուղատնտեսական հողերը կազմում են 0.72 %, այսինքն այդ տնտեսությունները ըստ էության ունեն փոքր ներուժ: 0.1-0.19 հա չափեր ունեցող տնտեսությունները, ունենալով տնտեսությունների թվի 7.07 %-ը, դրանց բաժին է ընկնում գյուղատնտեսական հողերի 0.77 %-ը:

Վերջինս հնարավորություն է տվել հանգելու որոշակի հետևությունների:

- Մասնավորապես՝ հանրապետությունում գյուղացիական տնտեսությունները ունեն չափազանց փոքր չափեր՝ մինչև 0.1 հա չափեր ունեցող տնտեսությունները կազմում են ընդհանուր տնտեսությունների թվի շուրջ 23.0 %-ը, որոնց բաժին է

ընկնում տնտեսություններին պատկանող գյուղատնտեսական հողերի չափազանց փոքր մասը: Փաստորեն արտադրության ծավալների առումով այդ տնտեսությունները իրենցից կարևորություն չեն ներկայացնում: Այդ վիճակին մոտ վիճակ գոյություն ունի 0.1-0.19 հա չափեր ունեցող տնտեսությունների համար: Դրանք, ունենալով 7.0 %-ից ավել տեսակարար կշիռ, արտադրական առումով նույնպես շոշափելի նշանակություն չունեն:

- *Արտադրական առումով կարևոր են համարվում 1-10 հա չափեր ունեցող տնտեսությունները, որոնց ներուժը հնարավորություն է տալիս ապահովելու արտադրանքի ավելի քան 70.0 %-ը:*
- *Գյուղացիական տնտեսությունների հաշվառման գործընթացում այլ մոտեցում պետք է ունենալ փոքր տնտեսությունների նկատմամբ, քանի որ դրանք արտադրական էական նշանակություն չեն կարող ունենալ, իսկ հաշվառման գործընթացը կարող է պահանջել մեծ ջանքեր:*
- *Գյուղացիական տնտեսությունների ներկայիս չափերի պայմաններում հրատապ է տնտեսությունների խոշորացման, համատեղ գործունեությանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը՝ հակառակ դեպքում տնտեսությունների ներուժի օգտագործումը կմնա ներկայիս ցածր մակարդակի վրա:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թվականի հունվար-սեպտեմբեր: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 9:
2. Նույն տեղում, էջ 14:
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2016, էջ 119:
4. Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Եր., 2006, էջ 3:
5. Վիճակագրական տարեգիրք-2016: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 295:
6. Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 16
7. Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները: ՀՀ ԱՎԾ. Եր., 2016, էջ 31
8. Հաշվարկների համար հիմք է ընդունվել՝ Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները: ՀՀ ԱՎԾ: Եր., 2016, էջ 57, 59

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց ներուժի օգտագործման խնդիրները՝ ելակետ ունենալով գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքները

Արթուր Ծպնեցյան

Հոդվածում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության դերի ներկայացման համատեքստում տրվել է գյուղատնտեսության հիմնական արտադրական միավորների կազմը: Գյուղացիական տնտեսությունների հաշվառման գործընթացում առաջարկվում է ունենալ այլ մոտեցում փոքր տնտեսությունների նկատմամբ, քանի որ դրանք արտադրական էական նշանակություն չեն կարող ունենալ, իսկ հաշվառման գործընթացը կարող է պահանջել մեծ ջանքեր: Գյուղացիական տնտեսությունների ներկայիս չափերի պայմաններում հրատապ է տնտեսությունների խոշորացման, համատեղ գործունեությանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

РЕЗЮМЕ

Размеры крестьянских хозяйств Республики Армения и задачи использования их потенциала, принимая за основу результаты всеобщей сельскохозяйственной переписи

Артур Цпнецян

Ключевые слова: *сельское хозяйство, внутренний валовый продукт, занятость, внешний товарооборот, крестьянское хозяйство, сельскохозяйственная коммерческая организация, сельскохозяйственные земли, всеобщая сельскохозяйственная перепись, потенциал хозяйств*

В статье в контексте представления роли сельского хозяйства в Республике Армения приводится основной состав его производственных единиц. В ходе учета крестьянских хозяйств в отношении малых хозяйств предлагается применить иной подход, поскольку они не могут иметь существенное производственное значение, а сам процесс учета может потребовать приложения больших усилий. В условиях существующих ныне размеров крестьянских хозяйств становится актуальным их укрупнение, осуществление мероприятий, направленных на совместную деятельность.

SUMMARY

The Size of Farms of the Republic of Armenia and the Usage Problems of their Potential having the Results of Agricultural Ubiquitous Accounting as a Basis

Artur Tspnetsyan

Keywords: *agriculture, gross domestic product (GDP) , activity, external trade, farms, agricultural commercial organization, agricultural ubiquitous accounting, potential of farms*

The article presents the group of major industrial units in the context of the role of agriculture in the Republic of Armenia. It is suggested to have another approach to the process of accounting when it comes to small farms, as they cannot have significant industrial importance. The process of accounting may require a lot of efforts. Regarding the present dimensions of farms it is urgent to plan programs to enlarge the farms and provide cooperation with them.